



«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

**ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն  
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ**

**Մ.Գ.Մանուչարյան  
06 մայիսի 2024թ.**

**ԿԱՐԾԻՔ  
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

Արթուր Արմենի Մաթևոսյանի «Հարկային բեռի արդարացի բաշխման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

**Մասնակցում էին՝** Մերի Մանուչարյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ*, Լիաննա Խաչատրյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ*, Եվգենյա Հակոբյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Ռոբերտ Սարինյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ.*, Բելլա Գաբրիելյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ*, Գրիգոր Մանուկյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ*, Գևորգ Հարությունյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Շողեր Պողոսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Ստեփան Պապիկյան՝ *տեխ.գիտ.թեկնածու*, Գևորգ Մարտիրոսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Հարկային բեռի բաշխման և հարկազանձման խնդիրները հասարակության համար միշտ էլ չափազանց կարևոր են եղել, քանի որ հարկը հանդիսանում է «քաղաքակրթության» գոյության ամուր վկայությունն ու հասարակության գործունեության հիմնական բաղադրիչներից մեկը: Այսօր դրանք առավել արդիական են, քան երբևէ: Յուրաքանչյուր երկրի համար հարկային բեռի արդարացի և արդյունավետ բաշխումը եղել և մնում է արդիական խնդիր: Հարկային բեռի մակարդակը կարող է ժամանակի ընթացքում փոփոխվել՝ պայմանավորված իրականացվող տնտեսական և հարկային քաղաքականության առաջնահերթություններով, տվյալ երկրի տնտեսության զարգացման տեմպերով,



համաշխարհային տնտեսությանն այդ երկրի տնտեսության ինտեգրման մակարդակով և բազմաթիվ այլ գործոններով: Յուրաքանչյուր երկիր պետք է գտնի հարկերի միջոցով ՀՆԱ-ի վերաբաշխման իր ուրույն ուղին: Ինչ վերաբերում է հարկային բեռի արդարացի բաշխման խնդիրներին, ապա դրանց լուծումը կայանում է նրանում, թե ինչպես է առհասարակ ընկալվում «արդարություն» հասկացությունը: Միջազգային պրակտիկայում հարկային բեռի արդարացի բաշխումը դիտարկվում է այն առումով, որ մի դեպքում հավասար հարկումը կիրառվում է հավասար կամ համանման պայմաններում գտնվողների նկատմամբ: Այստեղ կարևոր է հստակորեն բնորոշել այն չափանիշները, որոնց կիրարկմամբ հարկման ենթակա քաղաքացիները կամ կազմակերպությունները հանդիսանում են հավասար կամ համանման պայմաններում գտնվողներ: Այն անվանվում է արդարության հորիզոնական սկզբունք: Մյուս դեպքում՝ անհավասար դրության մեջ գտնվողների հանդեպ ցուցաբերվում է տարբերակված կամ ոչ հավասար մոտեցում, որին անվանում են արդարության ուղղահայաց սկզբունք: Վերոնշյալ գործոններով պայմանավորված տնտեսության զարգացման տարբեր փուլերում անհրաժեշտություն է առաջանում նորովի գնահատել հարկային բեռի բաշխման խնդիրները՝ նպատակ ունենալով պարզել, թե որքանով է այն համապատասխանում ժամանակի պահանջներին: Այս ամենով էլ պայմանավորված հիմնավորվում է սույն հետազոտության արդիականությունը, հրատապություն ու կարևորությունը:

### **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հետազոտության նպատակն է Հայաստանի Հանրապետության հարկային բեռի արդարացի բաշխման հայեցակարգի մշակումն ու դրա գործնականում կիրառությունը:

Առաջադրված նպատակն իրագործելու համար առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ✓ ուսումնասիրել հարկային բեռի էությունը, դասակարգման մոտեցումները,
- ✓ տարանջատել հարկային բեռի արդարացի և հավասարաչափ բաշխման հայեցակարգային մոտեցումները,
- ✓ ներկայացնել հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման մոտեցումները,
- ✓ գնահատել հարկային բեռի արդյունավետության մակարդակն արտերկրում և ՀՀ-ում,
- ✓ ներկայացնել հարկային բեռի բաշխման առանձնահատկություններն՝ ըստ հարկատեսակների,
- ✓ վերլուծել հարկային բեռի բաշխման մեխանիզմներն ուղղակի և անուղղակի հարկերի մասով,



- ✓ վերանայել հարկային բեռի արդարացի և արդյունավետ բաշխման խնդիրները եկամտային հարկի մասով,
- ✓ հիմնավորել հարկային բեռի վրա ազդող գործոնները և հաշվարկել դրանց չափը,
- ✓ մեկնաբանել «հարկային ծախս» հասկացությունը և ներկայացնել դրա մակարդակի ձևավորման վրա ազդող գործոնները,
- ✓ մշակել առաջարկություններ՝ ուղղված ԱԱՀ-ի դիֆերենցված դրույքաչափերի կիրառմանը:

### **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ**

Հետազոտության արդյունքում ստացվել են գիտագործնական նշանակության արդյունքներ, որոնց գիտական նորույթը կայանում է հետևյալում.

1. Գնահատվել են հարկային բեռի արդարացի և արդյունավետ բաշխման մոտեցումները եկամտային հարկի մասով և մշակվել են տարբերակներ հարկման տարբեր ռեժիմներում արդարության սկզբունքի պահպանման համար: Համահարթ և պրոգրեսիվ համակարգերի կիրառման դեպքում եկամտային հարկի բաշխման նպատակով առաջարկվել են անհրաժեշտ կարգավորումներ:
2. Հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման և հանրապետությունում երկարաժամկետ հատվածում տնտեսության ռազմավարական խնդիրների լուծման նպատակով առաջարկվել է Հայաստանում գործող հարկատեսակների դիֆերենցված դրույքաչափերի կիրառում, հատկապես ԱԱՀ-ի մասով՝ սահմանելով առավել ցածր դրույքաչափեր առաջին անհրաժեշտության որոշակի ապրանքների համար:
3. Հարկային ծախսերի կառուցվածքի ուսումնասիրության հիման վրա առաջարկվել է հարկային ծախսերի կիրառման ռազմավարական ուղղություններ՝ հաշվի առնելով պատերազմական և հետպատերազմական զարգացումները՝ կանխելով դրանց հետևանքով հնարավոր հարկային վնասների առաջացման ռիսկերը, ինչպես նաև մշակվել են հասցեական և ոլորտային արտոնությունների տրամադրման ռազմավարական ուղիներ:

### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվել է հետազոտվող թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են հետազոտության



գիտական արդյունքները և նորոյթները, դրանց տեսական և գործնական նշանակությունը, դրանց փորձարկումն ու հրապարակումները, ինչպես նաև ատենախոսության ծավալն ու կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Հարկային բեռի տեսամեթոդաբանական հիմքերը» գլխում ներկայացվել են հարկային բեռի էությունը և դասակարգման մոտեցումները, ինչպես նաև՝ հարկային բեռի արդարացի բաշխման հայեցակարգային մոտեցումներն ու տեսությունները հարկային քաղաքականության համատեքստում:

Ատենախոսության երկրորդ՝ «Հարկային բեռի արդարացի բաշխման և դրա կառավարման գերակայությունները ՀՀ-ում», գլխում հեղինակի կողմից վերլուծվել են հարկային բեռի բաշխման մեխանիզմներն արտերկրում և ներկայացվել են դրանց տեղայնացման առանձնահատկությունները ՀՀ-ում, ինչպես նաև գնահատվել են հարկային բեռի գնահատման ուղղությունները:

Ատենախոսության երրորդ՝ «Հարկային բարեփոխումների ռազմավարական գերակայությունները ՀՀ-ում» գլխում հեղինակի կողմից առաջարկվել են հարկային բեռի արդարացի և արդյունավետ բաշխման մոտեցումները ԱԱՀ-ի և եկամտային հարկի մասով, ինչպես նաև առաջարկվել են հարկային արտոնությունների կառավարման գերակայությունները հարկային բեռի արդարացի և արդյունավետ բաշխման համատեքստում: Արտոնությունների գծով հարկային բեռի արդարացի բաշխումը գնահատելու նպատակով ատենախոսությունում ներկայացվել է 2019-2022թթ. հարկային արտոնությունների կիրառման արդյունքում պետական բյուջե պակաս մուտքագրվող հարկային եկամուտների մակրոտնտեսական գնահատականը հարկային արտոնություններից օգտվող տնտեսության ոլորտների գծով: Միևնույն ժամանակ, ներկայացվել է ոչ ոլորտային բնույթի որոշ այլ հարկային արտոնությունների կիրառման արդյունքում պետբյուջեի հարկային եկամուտների կորուստների գնահատականը:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու եզրահանգումներ, որոնք ամփոփված են ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում:

## **ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ինչպես ցանկացած գիտական աշխատանք, սույն ատենախոսությունը ևս զերծ չէ որոշակի թերություններից, որոնցից կարևորել ենք հետևյալները.

1. Ատենախոսության խնդիրներից (էջ 5) մեկը ձևակերպված է հետևյալ կերպ. «ներկայացնել հարկային բեռի բաշխման առանձնահատկություններն ըստ հարկատեսակների»: Մեր կարծիքով, ատենախոսության գիտագործնական նշանակությունն էլ ավելի կբարձրանար, եթե հարկային բեռի արդարացի և արդյունավետ բաշխման մոտեցումները ներկայացվեին ոչ միայն ԱԱՀ-ի և



եկամտային հարկի մասով, այլն նաև անդրադարձ կատարվեր մնացած հարկատեսակների ներկայացմանը, քանի որ ուղղակի և անուղղակի հարկերի տեսակարար կշռում համապատասխանաբար շահութահարկի և ակցիզային հարկի մասնաբաժինը այնքան էլ փոքր չէ: Վերջիններիս կատարած անդրադարձը թույլ կտար ատենախոսությունում ներկայացնելու նաև հարկային մուտքերի և հարկային բեռի բաշխման ամբողջական փոխկապվածությունը, իսկ այդ մասով ներկայացված առաջարկությունները կլինեին առավել ամբողջական, տեղին և արժանահավատ:

2. 2.1 գլխում «Հարկային բեռի բաշխման մեխանիզմներն արտերկրում և դրանց տեղայնացման առանձնահատկությունները ՀՀ-ում» ենթագլխում իրականացված նկարագրությունը և վերլուծությունը հստակորեն չեն ձևակերպում ՀՀ օրինակով տեղայնացման մոտեցումները, այլ ուղղակի նկարագրական տեսքով ներկայացված են հարկային համակարգի չորս մոդելների վերաբերյալ ցուցանիշներ, իսկ ՀՀ հարկային համակարգի հետ հստակ տեղայնացման քայլեր և միջոցառումներ ատենախոսի կողմից առաջարկված չեն:
3. Ատենախոսության 3.3 «Հարկային արտոնությունների կառավարման գերակայությունները հարկային բեռի արդարացի և արդյունավետ բաշխման համատեքստում» ենթագլխում ատենախոսի կողմից հարկային արտոնությունների վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունը առավել ամբողջական կլիներ, եթե ՀՀ-ում իրականացվող հարկային արտոնությունների և ծախսերի վերաբերյալ իրականացվեր ՀՀ տնտեսության ճյուղային կառուցվածքի վերլուծություն, որի միջոցով հնարավոր կլիներ գնահատել ՀՀ տարածքային համաչափ զարգացումը:
4. Ատենախոսության գիտագործնական նշանակությունն էլ ավելի կբարձրանար, եթե հեղինակը գնահատեր հարկային բեռը ըստ ՀՀ տնտեսության առաջնահերթ ոլորտների, ըստ առանձին հարկային համակարգերի՝ պարզելով դրանց տարբերությունները, վերլուծեր սպառման, կուտակման, արտահանման և ներմուծման ազդեցությունը հարկային բեռի վրա:
5. Ատենախոսության 82-83 էջերում ատենախոսը շարադրում է հետևյալ մտքերը. «գյուղատնտեսական արտադրողների մեծ մասի կողմից արտադրանքի համար ԱԱՀ չի վճարվում ...» և «...արդյունքում անհավասար մրցակցություն է առաջանում այն սուբյեկտների նկատմամբ, որոնք առանց ԱԱՀ-ի վճարման են իրացնում գյուղատնտեսական արտադրանքը, օրինակ՝ գյուղական ապրանքների շուկաներ և այլն»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ն ներկայումս ունի ռազմավարական ծրագրեր գյուղատնտեսության զարգացման համար,



աննպատակահարմար է նրանց վրա հարկային բեռի ավելացումը՝ առանց այդ հարկային բեռի ավելացման հետևանքները գնահատելու: Նման առաջարկություններով հանդես գալու համար անհրաժեշտ են հավաստի փաստարկներ և գնահատականներ: Իսկ այս մասով հեղինակը 118-րդ էջում որպես առաջարկ նշում է. «Մրցակցային անհավասարությունը մեղմելու նպատակով առաջարկում ենք քննարկման առարկա դարձնել բացառապես տեղական արտադրության որոշ գյուղատնտեսական արտադրանքի օտարման գործարքների գծով ԱԱՀ-ի նվազեցված դրույքաչափ սահմանելու հարցը», որը հակասում է հեղինակի վերը հիշատակված մտքերին, քանի որ ներկայիս հարկային օրենսդրությունը այս ոլորտի համար չի կիրառում շահութահարկը և ԱԱՀ-ն՝ հենց այդ մրցակցային անհավասարությունը մեղմելու նպատակով:

6. Աշխատանքում առկա են տեխնիկական բնույթի մի շարք թերություններ, մտքի սխալ ձևակերպումներ, օրինակ՝ աշխատանքում առկա են որոշ մտքեր, որոնց սկզբնաղյուրները նշված չեն (օրինակ էջ 35), 103 էջից սկսած որոշ աղյուսակներում չափման միավորը նշված չէ, հղումների որոշ մասը պետք է ճշգրտել և այլն:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արթուր Արմենի Մաթևոսյանի «Հարկային բեռի արդարացի բաշխման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն հետազոտություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետությունում հարկային բեռի արդարացի բաշխման հիմնախնդիրների բացահայտմանն ու դրանց լուծման ուղիների մշակմանը:

Իրականացված հետազոտությունների արդյունքում առաջարկված տեսամեթոդական մոտեցումներն ու որպես գիտական նորույթ ներկայացված դրույթները գործնականում կարող են դրական ազդեցություն ունենալ և խորհրդատվական հիմք ծառայել Հայաստանի Հանրապետությունում հարկային բեռի օպտիմալ չափի որոշման, դրա արդարացի և հավասարաչափ բաշխման, ինչպես նաև պետության կողմից նոր հարկային քաղաքականություն մշակելու գործընթացում: Ատենախոսությունում ընգրկված որոշ մտքեր կարող են տվյալ թեման ուսումնասիրող ինչպես հայաստանյան, այնպես էլ արտասահմանյան հետազոտողների, ուսանողների և այլ անձանց համար ևս հետաքրքրություն ներակայացնել:

Թեկնածուական ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը, արդյունքները և գիտական նորույթը: Հեղինակի կողմից հրապարակված 9 (ինը) գիտական հոդվածները համապատասխանում են



հետազոտության ուղղվածությանը, դրա խնդիրներին և ունեն բավարար ընդգրկունություն:

Արթուր Արմենի Մաթևոսյանի «Հարկային բեռի արդարացի բաշխման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության և դրան համատեղ կազմված սեղմագիրն ու թվով 9 (ինը) հոդվածների հրապարակումները համապատասխանում են ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ աշխատանքի հեղինակը արժանի է Ը.00.02. – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (06.05.2024թ., արձանագրություն թիվ 5):

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ ավագ  
գիտաշխատող,  
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ**

**Գ.Մանուկյան**

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ  
գիտաշխատող,  
տնտեսագիտության թեկնածու**

**Գ.Մարտիրոսյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ՏԻ ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գ.Մանուկյանի և նույն ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու Գ.Մարտիրոսյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում եմ»՝

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտ. քարտուղար,  
տնտեսագիտության թեկնածու**

**Ե.Ա.Հակոբյան**

«06» մայիսի, 2024թ.

Կ. Տ.

